# Բուժհաստատությունների հերթերի կառավարման, ընտանեկան բժիշկների ծանրաբեռնվածության նվազեցման ծրագիր



# Նախաձեռնվող քայլեր




- Բուժաշխատողների ավելացում
- Կրկնակի այցերի կրճատում
- Հեռահար խորհրդատվությունների կազմակերպում
- Գրանցման միասնական համակարգ

# Բուժաշխատողների ավելացում

(10.000 կցագրված բնակչության դեպքում)

- Տեղեկատու աշխատակից (1)
- Ընդունարանի աշխատակիցներ (2-3, ծանրաբեռնված ժամերին՝ միաժամանակ 3)
- Զանգերի կենտրոնի աշխատակիցներ (2-3, ծանրաբեռնված ժամերին՝ միաժամանակ 3)
- Հերթապահ բժիշկ (1)
- Հերթապահ բուժքույր (1)



# Տեղեկատու աշխատակցի գործառույթները



- Բուժառուների հոսքի կառավարում՝ կտրոնների ակտիվացում, ուղղորդում համապատասխան բժշկի սենյակ կամ ընդունարան
- Ինֆորմացիայի տրամադրում
- Փաստաթղթերի տրամադրում
- Անհետաձգելի / շտապ դեպքերում կապի հաստատում բժիշկների հետ

# Զանգերի կենտրոնի աշխատակիցների գործառույթներ

- Պատասխանել մուտքային զանգերին
- Տրամադրել լիարժեք տեղեկատվություն
- Իրականացնել այցելությունների գրանցումներ
- Հավաքագրել բողոք/առաջարկները և փոխանցել համապատասխան բաժին



# Ընդունարանի աշխատակցի գործառույթներ




- Ծախառուների սպասարկում
- Նոր այցի գրանցում
- Ինֆորմացիայի տրամադրում
- Անհրաժեշտության դեպքում վճարումների ընդունում

# Հերթապահ բժիշկ

Ծտապ դեպքերի սպասարկում՝ հետազոտության արդյունքների քննարկում, բժշկական տեղեկանքների/քաղվածքների/ԱԹ տրամադրում, շտապ ոչ պլանային ցուցումների տրամադրում, առանց նախնական գրանցման մոտեցած բուժառուների սպասարկում:
Հերթապահ բժիշկների գրաֆիկում նախապես գրանցված այցեր չեն լինի:



# Հերթապահ բուժքույր

(առանձին կաբինետ)




- [x] Ճնշման չափում, պուլսօքսիմետրիա, գլյուկոզայի չափում և այլն
- [x] Դիսպանսեր հսկողության տակ գտնվող բուժառուներին դեղատոմսերի տրամադրում
- [x] Հերթում երկար սպասող բուժառուների սպասարկում՝ չափումների իրականացում մինչ ընտանեկան բժշկին/հերթապահ բժշկին մոտենալը

# Կրկնակի այցերի կրճատում
# Հեռահար խորհրդատվություն՝ զանգ բուժառուին

- Ցուցված հետազոտությունների քննարկում
- Քրոնիկ հիվանդությունների վերահսկում
- Նեղ մասնագետների մոտ ուղեգրում



# Գրանցման միասնական համակարգ



Ընդունելության հստակ ժամային նորմատիվ

Գրանցումը նախապես՝ զանգերի կենտրոնի/ ընդունարանի աշխատակիցների կամ Արմեդ հավելվածի միջոցով



# Այցի գրանցման և սպասարկման քայլերի հաջորդականություն

**1**

## Զանգերի կենտրոնի կողմից  բուժառուի գրանցում

- Բուժառուի նույնականացում
- Բուժառուի այցի տեսակի ճշտում՝ պոլիկլինիկայի անդամ, առանց ԱՀԱ, ԱՀԱ շրջանակներում սպասարկվող բուժառու, կամավոր ապահովագրությամբ կամ վճարովի այց
- Բուժառուի ապահովագրական կարգավիճակի ստուգում Արմեդ ծրագրով
- Բուժառուի այցի գրանցում
- Տեղեկացում բուժառուի գրանցված այցի մանրամասների վերաբերյալ (ժամ, վայր, անհրաժեշտ փաստաթղթեր)




**2**

Տեղեկատու աշխատակցի կողմից անձի ընդունում, կտրոնի ակտիվացում, ուղղորդում ընդունարան



3

Ընդունարանի աշխատակցի կողմից սպասարկում՝

- Նույնականացում անձը հաստատող փաստաթղթով
- ԲԿ մոտեցած այցելուների դեպքում Արմեդ ծրագրով կարգավիճակի ստուգում: Անհրաժեշտության դեպքում ապահովագրության ակտիվացում:
- Բուժառուի այցի տեսակի ճշտում
- Ուղղորդում ընտանեկան բժշկի մոտ
- ԲԿ մոտեցած ոչ թերապևտիկ այցերի դեպքում Արմեդ ծրագրով բաց ուղեգրի ստուգում և ընդունում, ուղղորդում համապատասխան մասնագետի մոտ:

4

Ընտանեկան բժշկի կողմից ընդունելություն:

- Անհրաժեշտության դեպքում ուղղորդում այլ հետազոտության:
- ԱՀԱ բուժառուների դեպքում բաց ուղեգրի ստեղծում Արմեդ ծրագրում:
- Ուղղորդման դեպքում տեղեկացում՝ պարտադիր նախապես այցի գրանցման վերաբերյալ



# Նախապես գրանցում չունեցող բուժառուի սպասարկում

1

Տեղեկատու աշխատակցի կողմից կտրոնի տրամադրում և ուղղորդում ընդունարան

2

Ընդունարանի աշխատակցի կողմից

- Պլանային այցի գրանցում՝
- Մոտակա ազատ ժամի առաջարկ

  (եթե տվյալ օրը ազատ ժամեր չկան, ապա առաջարկել գրանցում այլ օրվա համար)
- Ցուցված հետազոտության պատասխաններով մոտեցած այցելուի սպասարկում
- Հեռահար խորհրդատվության գրանցման առաջարկ, մերժման դեպքում՝ պլանային այցի գրանցում
- Եթե հետազոտություններն անցել է այլ բկ-ում, ապա ընդունարանում պատճենել և անկետայում ավելացնել տվյալ փաստաթուղթը: Եթե անկետան էլեկտրոնային է, ապա սքանավորել:
- Հեռահար խորհրդատվության դեպքում բուժառուին տեղեկացում՝ փաստաթղթի փոխանցման և ընտանեկան բժշկի զանգի ժամկետի մասին:

3

Դիսպանսեր հսկողության տակ գտնվող այցելուի սպասարկում՝ դեղորայքի դուրսգրման, գլյուկոզայի մակարդակը չափելու, ճնշման չափման համար

- Ժամի գրանցում և ուղղորդում հերթապահ բուժքրոջ սենյակ

4

Տեղեկանքների, քաղվածքների համար մոտեցած այցելուի սպասարկում՝

- Ընտանեկան բժշկի մոտ պլանային այցի գրանցման առաջարկ: Մերժման դեպքում հերթապահ բժշկի գրաֆիկում տվյալ օրվա համար այցի գրանցում



առողջ.am

Ձեր առողջության տիրույթը

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

## ՄԵՐ ԱՌՈՂՋ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՁԵՐ ՀԱՆՐՕԳՈՒՏ ԴԵՐԻ ՀԱՄԱՐ:

ՕՐԵՆՔ

ՎԵԲ ԿԱՅՔ

Երևան Հանրապետության հրպ., Կառավարական տուն 3

+374-60-808003

info@moh.am

www.uhif.am